

Թերաշխոցին, բայց սա հանդուս չի կենար, և հակառակ իր խոստման ինչ ինչ անթններ վար զբաժնի ըլլալով՝ չ'ուզեր յանձնել զանոնք կը չառայ խոսովի միարանութիւնը: Եօթը տարի կը տեւէ այս խոսովայոյ վիճակը, և վերջնականապէս Յովհաննէս եպիսկոպոս այս անգամ խնդրք երկու արարապէսներու, Մկրտիչ եպիսկոպոսին և Մանուսրին, որոնք զատի կը քաշեն Թերաշխոցին երկրորդ անգամ և կը պարտաւարեցնեն զայն և հ'առնեն ինչ որ մնացած էր վաշխառուին քով: զատարանը նոր վճարքով մը կը հաստատէ զատարարութեան արդիւնք ՁԿՎ (= 1524) ինչ:

Իսլաւապետ եղաւ որդի Աղաւաղաւի (= Առատաւատաւ) կը թուի թէ երեսուցէ մացի է ընդի, իսկ Մանուսր, որդի Ղաննէմի, ըստ Առատաւատաւ եպիսկոպոսի թարգմանը կամ զորձակատարն է Լատինաց վանքին, որոնք զանոնք ըստած և թեթիկէմի անունով ախտաւորներէն զանձուած տարբի խնդիրն ալ հարգապէս կու տան. այսինքն զատարանով որչաչ կու տան թէ իւրաքանչիւր ուխտաւորէն բերական եղաւ անոնք զբաժնի միայն պիտի առնուի և աւելին պահանջելով պիտի չնեղեն ուխտաւորները:

Յովհաննէս եպոս. տանն, Իսլաւապետ եղաւ և Մանուսր 5000 զահեկան ծախանով նորոցն և անոնցն կու տան ձիւննեաց յիւրան վրայ համարածման ուսմանողոյն եկեղեցոյն խախտել զբժ. բէթը ՁԿԶ (= 1529):

Իսկ Յովհաննէս եղաւ իր պատրիարքական իրաւունքներն ու իշխանութիւնը իր իսկ յոժար կամքով կը փոխանցէ Մէլքոնցի Առատաւատաւ եպոսին: Իր փոխանորդ Իսլաւապետ եղան. ալ իր Միլիքէլիի իրաւունքը կը փոխանցէ Առատաւատաւ եպոսին: Այս գործողութիւնը պաշտօնապէս կը կատարուի զատարանի անդէ և զատական պաշտօնագրերով ՁԿԶ (= 1522) Բենէպի ինչ:

Եթէ Թլիգուրանցի'ն է Ս. Յակոբի գործերուն վարչը և ատենց հասը կեցողը, անձամբ ու յաջորդով, այն ատեն իւրեքին կը տեսնուի թէ բաւական ժամանակ և կորով նուիրած է բանաստեղծ կաթողիկոսը երեսուցէմի համար, ծառայութիւն ըսուելու արժանի փառաւոր գործունէութեամբ մը:

Ինչպէս որ կը տեսնուի, Թլիգուրանցի կաթողիկոսին կեանքը, գրեթէ անձամբ կը մնայ իր վախճանումը տեղի ունեցած պիտի ըլլայ 1525ի Մայիսէն յառաջ վահկայի մէջ, որովհետեւ կ'ըսուի թէ հոն թաղուած է (Սխումս, էջ 535բ):

Բ. Ե.

Ո Ւ Ղ Ե Ր Չ

Մատուցուած Պարսկ-Հնդկաստանի ընտի Հայոց Առաջնորդ Գեոր. Մարտիկ Արքեպիսկոպոսին, իւր՝ Մուշաբնա (Ջալա) խաղաք ժամանելու օրը, 3 Մայիսի 1928, Տեղական Ազգային Վարչութեան նախագահ Պրն. Հայրապետ Գաբրիելի կողմից:

Նորին Բարձր Արքեպիսկոպոսին
Տ. Մարտիկ Արքեպոս. Տէր-Մովսիսեան
Մարտիկոս
Բարեխնամ Առաջնորդի թեմին Հայոց
Պարսկ-Հնդկաստանի
Աստ

Գերապատելի Հայր,
Թոյլ տուեցէք, խնդրեմ, քաղաքիս Հայ Հասարակութեան կողմից մաղթելու Ձեզ բարձր զարդարտ այս գեղեցիկ կղզոյ հիւրընկալ ամենքը:

Սուրբարայի Հայ Հասարակութիւնը, որ քառորդ զարկն աւելի է որ բախտ չէ ունեցել ընդունելու իւր թեմակալ Ս. Առաջնորդներէն, այսօր երջանիկ է զգում իրեն որ բախտ է ունենում ընդունելու իւր մէջ իւր սիրեցնող թեմակալ Արքեպոս Առաջնորդին, որը արձանարճելով Երկար և ամօտանկի ճանապարհորդութիւն ի սէր իւր տարագիր հօտին, բարեհաճել է այցելել նաեւ այս քաղաքը և մխիթարել իւր հօտին թէ հողեպէս և թէ ազգայնապէս:

Սուրբարայի Հայ Հասարակութիւնը, իրրե հարապատ զուակներ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցոյ, ողջունում է Ձեզ իրրե ակտնաւոր միարանի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և իրրե արժանաւոր ներկայացուցչի Ամեն. Հայոց Վեհ. Հայրապետի, որը իւր հետ բերել է իւր պանդուխտ զուակների համար Մայր Աթոռի և նորա արժանաւոր Գահակալի հովուապետական օրհնութիւնները և մեր վերաջինեղ Հայրենիքի մխիթարական և սրբասպանդիչ լուրեր:

Սուրբարայի Հայ Հասարակութիւնը, ողջունում է Ձեզ իրրե բարեխնամ Առաջնորդի Պարսկ-Հնդկաստանի Հայոց ընդարձակածաւալ թեմի և իրրե արժանաւոր Աթոռակալի հռչակաւոր Ս. Ամենափրկիչ



վանքի, որը բերել է օրհնութիւնները նոյն
թիւի նուիրական վայրերից և բարեւեր
մեր Պարսկահայ հայրենակիցներին:

Քաղաքիս Հայ Հասարակութիւնը սզ-
ջունում է Ձեզ իրրե մեր Մայր Աթոռ Ս.
Էջմիածնի միաբանութեան ականաւոր և
հայ հոգեւորականութեան լուսատու աստ-
ղերից մէկի, որը իւր քառասունամեայ
բեղմնաւոր և օգտակար գործունէութեամբ
ամենապատուաւոր տեղ է գրուել մեր ազ-
գի նորագոյն պատմութեան մէջ:

Դարձեալ մողթելով Ձեզ բարի դալուստ,
յոյս ունինք Ձեր այցելութիւնը մեր քա-
ղաքը կը լինի ըստ ամենայի հաճելի և
իշխատակիւ:

Համբուրելով Ձեր օժեալ Աջը, աղա-
չում ենք Արարչից երկարելու Ձեր թան-

կազին կեանքի թիւը պարգևելու Ձեզ ա-
ռողջութիւն, ոյժ և եռանդ՝ զեռ երկար
տարիներ շարունակելու Ձեր նուիրական
ստաքելութիւնն և իրադործելու Ձեր վսեմ
ճրագիրները հայրենի աշխարհի և եկեղե-
ցւոյ բարգաւաճման և պայծառութեան հա-
մար:

Յորին ակնածութեամբ պատիւ ունիմ

Մնալ

Ձեր Բարձր Արբազնութեան
ամենախոնարհ ծառայ

ՀԱՅՐԱՊԵՏ ՅԱԿՈԲԵԱՆ

Նախագահ Տեղակալ Ազգային Վարչութեան

Սուրբաբայա, Ջափա
3 Ապրիլ 1928

ՆԺՄԱՐՔ ՆԱԽՆԵԱՑ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Ս. Ե. ՔՐԵՄԻ Ա. ՍՈՒՐԻՈՑ

ՎԵՇՏԱՍԱՆ ԱՍԱՑՈՒԱԾՔ ՎԱՍՆ ԵԿՈՄԻԴԵԱՅ ՔԱՂԱՔԻՆ

(Ճարտնակութիւն)

Չամենայն սուգ տեսանէ անդ: Յաճախն
առաջի տեսողաց պէսպէս ողորմ տեսիլք:
Եթէ առաջին սղոյն յաղթէ, յերկրորդէ՝
անտի պարտի: Եւ եթէ յերկրորդէ՝
փախչի, յերրորդէ՝ անտի ոչ զերծանի:
Պատեն գնա բիւր սուգք, ծնուցանեն ի
նմա բիւր ողորմա: Քանի՛ իցէ դաւրու-
թիւն ական, մարտնչել ըննողէմ արտաս-
ուաց, ի մէջ հասակաց պէսպէս չափոց և
ազգի ազգի զիականց: Քանի՛ արկ սանձս
ի գութս արգելուլ գնոսա ի յալոյ: Եթէ
ծերքն ոչ լացուցանեն, մահ անմեղացն
չարչարէ՛ զքեզ: Որպէս ցանկալի ևն կեանք
նոցա, ողորմ ևն մահք նոցա: Եթէ մահ
ուզիդ դառն է իրրե պատուով մեծարի,
քանի՛ ևս դառն է սուգ որ հեղձեալ ևն
յամենայն կողմանց: Մեծ է քան գտեղի
այն սուգն մեծ որ է՝ ի նմա: Չի՛ք անդ
մխիթարութիւն որ ջնջէ զարտասուս յա-
չաց: Դա՛ն է մահ աղայոց, սաստիկ է
սուգ երիտասարդաց: Մեր որոյ չէ խիստ

սուգ իւրեանց, յոյժ ողորմք ևն զի հեզ-
ձեալք ևն: Եւ եթէ թողցես զմարդիկ այն,
և զարձցիս առ շինուածս, ողորմ մեռե-
լոց նմանն, իրրե զմեռեալս անկեալ ըզ-
մեռելովք: Եւ եթէ նայեսցիս ի քաղաքն,
նմա՛ն է ամենեւին թաչնոց, որ նստէր ի
վերայ ձագուց և հեղձուցին գնա և զը-
սիբելիս իւր: Ո՞ր առնոյր տայր նմա զերե-
միայ, որ ողորմոյն զգուստար Սիոնի: Որ-
գի՛ն Քեզիկեայ պիտոյ էր նմա պատմել ըզ-
նմանէ ողբովք իւրովք: Ողորմ ձայնիւք
յաւզեաց, արա՛ր ողբս զառնութեան: Ին-
քան որ քաղցրացու սուրբ հոգւովն, զառ-
նութիւն արբուցանէ ձայնիւ: Ի մեղսնո-
ցա, քաղցրութիւնն ի դառնութիւն գար-
ձեալ լինէր: Մարգարէք բղխմունք քաղ-
ցրութեան, դառնութիւն արբուցանելին ի
բարկութեան: Դառնացու բղխումն երե-
միայի, զի դառնացու որթն քաղցր: Ինքն
խակ սասց, թէ զիս՞րդ դառնացու որթդ
քաղցրութեան⁽¹⁾: Եւ քաղաք որ կործա-

(1) Է յուելուստ սրբազնին:

(1) Հմեհ. երեւ. Բ. 21: